ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.10.2021Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են **Ն.Վարդանյանը, Մ.Գասպարյանը, Կ.Դավթյան, Տ.Եփրեմյանը,Ա.Փանոսյանը, Մ.Պողոսյանը:**

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 78-Ն և 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 64 որոշումներում փոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 55 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
6. Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0361-0305 ծածկագրով հողատարածքից 0,69 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

8. Քաղաքացու անվամբ գրանցված 07-008-0276-0057 կադաստրային ծածկագրով 0,17115 հա, 07-008-0206-0001 կադաստրային ծածկագրով 0,2959 հա, 07-008-0206-0007 կադաստրային ծածկագրով 0,08795 հա և 07-008-0276-0056 կադաստրային ծածկագրով 0,17327 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
9. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 53 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
10. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
11. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
12. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի20-ի թիվ 65 որոշման և 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 54 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***առաջարկում եմ***, ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2021 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-7 դեմ - 0 ձեռնպահ -1

Հակոբ Գրիգորյան

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով,***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները համաձայն հավելված N 2-7: Քանի որ բյուջեն պետք է հավասարակշռված լինի, ծախսերում անհրաժեշտություն է առաջանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Թույլատրել 2021թ. ընթացքում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Թույլատրել գնումները կատարել «Գնումների մասին» օրենքի համաձայն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-7 դեմ - 0 ձեռնպահ -1

Հակոբ Գրիգորյան

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ., 14 շենքի 25 բն. բնակիչ ***Արմենուհի Վոլոդյայի Նալթակյանի*** 2021 թվականի սեպտեմբերի 02-ի թիվ 3931-16, Արզական գյուղի Դ. Ավետիսյան փողոցի 9 տան բնակիչ ***Արման Տիգրանի Խաչատրյանի*** 2021 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 4027-16, Արզական գյուղի Երևանի փողոցի 41 տան բնակիչ ***Լյուդմիկ Հայկավարդի Խաչատրյանի*** 2021 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 4025-16, Բջնի գյուղի 12 փողոցի 5-րդ նրբանցքի 1 տան բնակիչ ***Ռուբիկ Հայրապետի Ավագյանի*** 2021 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 4298-16, Չարենցավան քաղաքի 7-րդ թաղ., 18 շենքի 9 բն. բնակիչ ***Համլետ Գառնիկի Մովսիսյանի*** 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 4579-16, Կարենիս գյուղի Վ.Մնացականյան թիվ 1 նրբանցքի բնակիչ ***Սարիբեկ Սերոբի Սարգսյանի*** 2021 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ

4364-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Արմենուհի Վոլոդյայի Նալթակյանին,*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Արման Տիգրանի Խաչատրյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Լյուդվիկ Հայկավարդի Խաչատրյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Ռուբիկ Հայրապետի Ավագյանին,*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Համլետ Գառնիկի Մովսիսյանին,*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Սարիբեկ Սերոբի Սարգսյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 78-Ն և 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 64 որոշումներում փոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ.Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով. ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու մասին» թիվ 78 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Կանանց և երիտասարդների, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում երեխաների պաշտպանության) հարցերով խորհրդակցական մարմնի կազմը»:

2 Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 17-ի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին» թիվ 64 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

2.1 Որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Կանանց և երիտասարդների, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերով խորհրդակցական մարմնի կազմը»:

2.2 Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 17-ի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին» թիվ 64 որոշման 1-ին հավելվածում «Շուշան Սարգսյան» բառերը փոխարինել «Սուրեն Մուրադյան» բառերով, «Վարդգես Չիլինգարյան-համայնքի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «Վարդգես Չիլինգարյան-համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական» բառերով, «Սուրեն Շահնազարյան» բառերը փոխարինել Գայանե Աֆյան» բառերով, «Սուրեն Մուրադյան» բառերը փոխարինել «Սաթենիկ Բալաբեկյան» բառերով, «Երեմ Սահակյան /ավագանու անդամ/» բառերը փոխարինել «Երեմ Սահակյան /համայնքի ղեկավարի օգնական/» բառերով:

2.3 Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 17-ի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին» թիվ 64 որոշման 2-րդ հավելվածում «Շուշան Սարգսյան» բառերը փոխարինել «Սուրեն Մուրադյան» բառերով, «Տատյանա Սաղաթելյան» բառերը փոխարինել «Մերի Սարադյան» բառերով:

2.4 Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 17-ի «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին» թիվ 64 որոշման 3-րդ հավելվածում «Շուշան Սարգսյան» բառերը փոխարինել «Սուրեն Մուրադյան» բառերով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 55 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ.Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Ա.Զաքարյանի զեկուցագիրը և Արզական գյուղի «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Թ.Խաչատրյանի 2021 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 4017/04 գրությունը.***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 55 որոշման 14-րդ հավելվածի (Չարենցավան համայնքի ***Արզական գյուղի «Արվեստի դպրոց»*** ՀՈԱԿ-ի 2021թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) 4-րդ տողի ***«9»*** թիվը փոխարինել ***«9.5»*** թվով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացիների կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը.***առաջարկում եմ.*** Սեփականության իրավունքով ***Վահագն Երանոսյանին*** պատկանող 07-015-0051-0007 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ գործառնական նշանակության հողատարածքի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի: Սեփականության իրավունքով ***Վահե Բալաբեկյանին*** պատկանող 07-015-0186-0012 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ գործառնական նշանակության հողատարածքի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.Համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0361-0305 ծածկագրով հողատարածքից 0,69 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-240 եզրակացությունը. ***առաջարկում եմ.*** համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0361-0305 ծածկագրով հողատարածքից 0,69հա մակերեսով անտառային հողեր նպատակային նշանակության խոտհարքներ և թփուտներ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված **որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր**:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. Քաղաքացու անվամբ գրանցված 07-008-0276-0057 կադաստրային ծածկագրով 0,17115 հա, 07-008-0206-0001 կադաստրային ծածկագրով 0,2959 հա, 07-008-0206-0007 կադաստրային ծածկագրով 0,08795 հա և 07-008-0276-0056 կադաստրային ծածկագրով 0,17327 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-240 եզրակացությունը. ***առաջարկում եմ.*** Համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0361-0305 ծածկագրով հողատարածքից 0,69հա մակերեսով անտառային հողեր նպատակային նշանակության խոտհարքներ և թփուտներ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված **որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր**:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-7 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 53 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Հեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.***առաջարկում եմ.***Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 16-ի «Համայնքի անվամբ գրանցված 07-015-0005-0070 կադաստրային ծածկագրով 0,00954 հա բնակավայրերի նշանակության հողամասը քաղ. Սարգիս Եղիազարյանի սեփականությունը ճանաչելու մասին» թիվ 53 որոշման մեջ ***«Սարգիս Եղիազարյանի»*** բառերը փոխարինել ***«Յուրիկ, Իզոլդա, Սարգիս, Նաիրա, Նոնա և Սուրիկ Եղիազարյանների»*** բառերով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

10. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Հեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ 07-007-0048-0020 կադաստրային ծածկագրով՝ 39.0 քմ մակերեսով և 07-007-012-007 կադաստրային ծածկագրով՝ 47.0 քմ մակերեսով հողատարածքները չեն դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին.առաջարկում եմ. թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 3-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 07-007-0048-0020 կադաստրային ծածկագրով՝ հողատարածքը /կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճեն/:Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Եսայան փողոցում գտնվող 07-007-012-007 կադաստրային ծածկագրով արտադրական շենքի զբաղեցրած հողատարածքը /կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճեն/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

11. *Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Ն.Դաշյանի 25.05.2021 թվականի թիվ 2730/07 դիմումը.***առաջարկում եմ՝*** թույլատրել 10 տարի ժամկետով համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ ք.Զարենցավան 1-ին Ա թաղամաս 4-րդ շենք թիվ 96 ոչ բնակելի տարածքը՝8.82 քմ մակերեսով վարձակալությամբ՝ տարեկան 10.0 հազար դրամ վարձավճարով տրամադրելու Նիկոլայ Դաշյանին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

12. Զարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի20-ի թիվ 65 որոշման և 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 54 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Հեկ.Ս.Մուրադյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 08-ի N ԳԱ/15.26215-2021 գրությունը.***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 65 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հանել որոշմամբ հաստատված հավելված 1-ի՝

«Առանձնացված ստորաբաժանում

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Չարենցավանի տարածքային բաժին» բաժինը:

Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 54 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-7 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Գրիգորյան Հակոբ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**